

**ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԱՂԹՅՈՒՐՆԵՐՈՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԵՋ***

Պրոֆ. ՌԻՉԱՐԴ ՋՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ
(ԱՄՆ, Կալիֆոռնիայի ճամայոսաբան)

Հայկական դասական աղբյուրներու քննական ուսումնասիրությունն ու թարգմանությունն նոր է, որ կզարգանա Միացյալ Նահանգներու մեջ: Այս հաղորդումը նկարագրական հակիրճ ակնարկ մըն է հայ դասական-պատմագրական գործերու անգլերեն թարգմանություններուն, որոնք ներկայիս, առաջին անգամ ըլլալով, տրամագրելի են մասնագետներու և ամերիկահայերու, որոնք անկարող են հայերեն բնագրերը կարդալու:

XIX դարու ընթացքին, հայկական բազմաթիվ դասական աղբյուրներ մասամբ կամ ամբողջությամբ թարգմանվեցան ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և ռուսերեն: Նման զուգահեռ զարգացում տեղի չունեցավ անգլիախոս աշխարհին մեջ: Միայն XX դարու երկրորդ կեսին և մանավանդ վերջին տասնամյակի ընթացքին էր, որ հայկական դասական աղբյուրներու անգլերեն թարգմանությունները հրատարակվեցան Միացյալ Նահանգներու մեջ: Ասոնք կամ ծանոթագրված քննական հրատարակություններ են, կամ ավարտաճառեր և կամ պարզ թարգմանություններ՝ որոնք սկզբնաղբյուրի մը վրա հիմնված են: Մինչ այս աշխատանքներուն որակն ու ձևը շատ կտարբերին, կարևորը սակայն այն է, որ հիմա այլևս անգլերենով կարելի է կարդալ Փավստոս Բուզանդացիի, Ագաթանգեղոսի, Կորյունի, Մովսես Խորենացիի, Ղազար Փարպեցիի, Եղիշեի, Սեբեոսի, Անանիա Շիրակացիի, Ղևոնդ Մամիկոնյանի, Արիստակես Լաստիվերտցիի, Կիրակոս Գանձակեցիի, Գրիգոր Ակնեցիի և Մատթեոս Ուռհայեցիի գործերը:

Այս առաջին թարգմանությունները մասնագիտական փորձեր չէին. անոնք գրված էին ամերիկահայերուն հայրենասիրություն և հպարտություն ներշնչելու համար: Այսպես, Ավարայրի ճակատամարտի 1500-ամյակի առթիվ, Հովհաննես Մովսիսյան և Տիգրան Պոյաճյան 1951-ին Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» The History of Vartan and the Armenian War (New York, Delphic Press, 1952) գործի թարգմանության ձեռնարկեցին: Տրված ըլլալով, որ այս երկու թարգմանիչներն որևէ մեկը չէր կրնար կարդալ Եղիշեի գրքար բնագիրը, ուստի անոնք հիմնված են գրքի արդի հայերեն մեկ թարգմանության վրա, որմե պատրաստած են ոչ քննական անգլերենը, թարգմանության զուգահեռ հրատարակելով իրենց օգտագործած արդի հայերեն բնագիրը: Գիրքի հակիրճ նախաբանին մեջ, Մովսիսյան և Պոյաճյան կմերժեն ընդունիլ Եղիշեի գործի հարազատության և վկայություն մը ըլլալու գծով արտահայտված կասկածները: Անոնք ընթերցողները կխրախուսեն ըսելով, որ «հեղինակը կզացվի, կզայրանա և կհուզվի երբ կպատմե. ան իր նյութին հետ կթվի ըլլալ, երբ կխոսի մարդոց և արարքներու, հերոսության և երկշտության, հավատարմության և դավաճանության, առաքինության և շարամտության մասին: Համարձակորեն և քաջաբար կգիմակայե և կդատապարտե հանցավորը, կգովաբանե և

* Զեկուցված է Միջնադարյան հայ գրականությանը նվիրված միջազգային առաջին գիտաժողովում, 1986 թ. սեպտեմբերին:

կաստվածացնե առաքինին, նկատի ունենալով, որ իր միակ նպատակը աղատությունաց, նվիրումի և հայրենասիրության փառաբանումն է»:

Նույնն է Պետրոս Նորհատի կողմն Կորյունի «Վարք Մաշտոցի» The Life of Mashtots (New York: Armenlan General Benevolent Union of America, 1964) անգլերեն թարգմանության պարագան: Նորհատ իր թարգմանությունը հիմնած է Մանուկ Աբեղյանի նույն գործի արդի հայերեն խմբագրության վրա՝ հրատարակված 1941-ին: Նորհատ նաև ներկայացուցած է Աբեղյանի նախաբանի ամփոփումը, որ գործի թվականի և նշանակության հարցերը կարծարծե: Հակառակ այն իրողության, որ Նորհատ անկարող է գրաբար բնագիրը կարդալ և անգլերեն թարգմանությունը պատրաստել է հիմնված արդի հայերեն խմբագրության վրա, ան կցած է գրաբար բնագիրը, կարծեք՝ գործի հարազատությունը շեշտելու համար: Նորհատի միակ այլ հավելումը կկայանա այն իրողության մեջ, որ ան կուզե վեր հանել հայկական այբուբենը և շեշտել անոր ստեղծիչի գործի կարևորությունն ու արժեքը, որով կարելի դարձավ հայ գրականության ոսկեդարը և որմե հիմնականորեն ազդվեցավ հայոց պատմության ընթացքը:

Միացյալ Նահանգներու մեջ հրատարակված առաջին քննական թարգմանությունը Գրիգոր Ակենցիի Gregory of Akants «Պատմութիւն վասն Ազգին Նետողացն» History of the Nation of the Archers-ն է. խմբագրության մը Ռոբերտ Ֆ. Պլեյքի (Robert F. Blake) և Ռիչարդ Ն. Ֆրայի (Richard N. Frye): Թարգմանություն 1949-ին հրատարակված է Harvard Journal of Asiatic Studies-ի մեջ, ապա 1954-ին առանձին հատորով (Cambridge: Harvard University Press, 1954) հրատարակչատան կողմն: Այս վերջին րատարակությունը կպարունակե բառարան մը, ինչպես նաև մոնկոլական-հանուններու և բառերու ցանկ մը՝ պատրաստված Ֆրանսիս Վուտման Բլեյքի կողմն (Francis Woodman Cleaves): Երկնդու գրությունը հիմնված է Քերոլքե Պատկանյանի Վենետիկի ձեռագրի խմբագրության (հրատարակված Ս. Պետրերուրգ 1870-ին), ինչպես նաև նույն տարին Երուսաղեմի մեջ լույս տեսած մեկ այլ տարբերակին վրա: Երկու խմբագրություններու տարբերությունները, խմբագիրներու կատարած հստակացումները և լեռնյայն ընկալվող իմաստները նշված են առանձնապես: Տրված ըլլալով, որ այս գործը նախապես վերագրված էր Վարդան Պատմիչին կամ ալ Մաղաթիա Աբեղյանի, Պլեյք և Ֆրայ կարծարծեն գործի հեղինակության, թվականի և պարունակության վերաբերող հարցերը: Ըստ անոնց, «գրությունը հավատացյալ ականատեսի արձանագրություններն կբաղկանա, հակառակ այն իրողության, որ անոր դրի առած դեպքերու մեծամասնությունը գրույցներու վրա հիմնված է և վկայություններն չի բխիր ու իբրև այդպիսին՝ ան արժեքավոր զուգորդն է Կիրակոս Գանձակեցիի անձնական փորձառության վրա հիմնված պատումին»: Այս թարգմանության կարգ մը թերությունները նշված են Ներսես Ակինյանի կողմն «Հանդես ամսօրյայի» մեջ, 1955-ին:

Ռոբերտ Հ. Հյուսընի, Արա Տոսթուրյանի, Գրիգոր Հ. Մաքսուտյանի, Զավեն Արզումանյանի և Լևոն Ավտոյանի գործերը ավարտաճառեր են, որոնք կբովանդակեն քննական թարգմանություններ, ներածականներ, ծանոթագրություններ և մեկնաբանություններ: Այս բոլորը մեքենագրված, պատճենահանված և կազմված տրամադրելի են University Microfilms International-ի կողմն (Ann Arbor, Michigan): Փրոֆեսոր Կիրիլ Թումանովի ուսանողներն Հյուսըն (Hewsen) գրած է «Պատմական աշխարհագրության ուսումնասիրության ներածական՝ Անանիա Շիրակացիի Աշխարհացույցը. նախապես վերագրված Մովսես Խորենացիի», Introduction to the Study of Armenian Historical Geography: The Ašxarhaç' oyc' of Ananias of Širak Formerly

Attributed to Moses of Xoren (Georgetown University, 1967: UMI Order No. 68—1898): Հյուսիսային Երևանի Աշխարհացույցի հեղինակին և թվականին հետ առնչվող զանազան վարկածներ և հավելյալ փաստարկություններ կենդանության գործին VII դարուն պատկանելի ճշմարտություն համար: Ան թարգմանած է գործի հակիրճ «1819» և ընդարձակ «1881» տարբերակները, որոնց մեջ օգտակար տեղեկություններ ավելացած է Հայաստանի պատմական աշխարհագրության մասին: Ան ուշադրությամբ քննարկած է պրոֆ. Ս. Տ. Երեմյանի Աշխարհացույցի թվականին և հեղինակին վերաբերող փաստարկությունները, վերջապես միանալու համար այն մասնագետներուն, որոնք Շիրակացին Աշխարհացույցի իսկական հեղինակը կնկատեն:

Արա Տոթուրյանի ավարտաճառը, պատրաստված բյուզանդագետ Պիտեր Խարանիսի հսկողության ներքև, կընթերցվի «Մատթեոս Ուռհայեցի ժամանակագրություն», The Chronicle of Matthew of Edessa, վերնագիրը (Rutgers University, 1972, UMI Order No. 72—17, 837): Թարգմանությունը կըրկանդակեն ներածական մը, մեկնաբանություն մը, աշխարհագրական հավելված մը և քարտեզներ: Ավելին, գործի անգլերեն թարգմանությունը ժամանակագրության 3 բաժինները կնկարկեն. ասոնց կհաջորդեն Գրիգոր Երեցի կողմից գրված շարունակությունը: Տոթուրյանի ներածականը Ուռհայեցիի կյանքին, տեսակետներուն և պատմական մոտեցումին վրա կկեզդրանա: Ներածականը նաև ժամանակագրությունը կբաղկատեն նմանօրինակ գործերու հետ: Տոթուրյանի մատենագիտությունը ցույց կուտա, որ ան հայկական ավելի արևմտյան աղբյուրներ կօգտագործեն և անոնց վրա կհիմնվի:

Մաքսուտյան, Արզումանյան և Ավետյան իրենց ավարտաճառերը պատրաստած են Քուլմբիա համալսարանի դասախոս Նինա Գաբուրյանի հսկողության տակ: Մաքսուտյանի բացառիկ ուսումնասիրությունը՝ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցիի «Պատմություն Հայոց»-ի History of Armenia (Columbia University, 1973, UMI Order No. DDJ74—01500) քննական թարգմանությունն ու մեկնաբանությունը կպարունակեն իր մեջ: Ան հիմնված է Թիֆլիսի 1865-ի 13 ձեռագիրներ ընդգրկող, ինչպես նաև Երուսաղեմի Ս. Հակոբ վանքի 1867-ի 8 ձեռագիրներ պարունակող խմբագրությանց վրա: Ցույց տալով Սեն Մարթեի XIX դարու ֆրանսերեն թարգմանության բաղմամբի սխալները, Մաքսուտյան իր անգլերեն թարգմանությունը օժտած է X դարուն պատկանող այս գործի կազմության, ոճի, աղբյուրներու, վստահելիության և պատմության վերաբերող պարզաբանական ներածականով մը: Մաքսուտյան, որ Միացյալ Նահանգներու մեջ գրաբարի առաջնակարգ մասնագետներին է, ցույց կուտա թե Բագրատունի թագավորներ Սմբատ I-ի և Աշոտ II Երկաթի ժամանակակից Հովհաննես կաթողիկոս «անզուգական ծանոթություն և հստակ խորաթափանցություն մը» ունեն իր ժամանակաշրջանի վերիվայրումներուն դեմ: Ավարտաճառը, կարգ մը փոփոխություններով, շուտով պիտի հրատարակվի Scholars Press-ի կողմից, որ արդեն իսկ հրատարակած է զանազան հայագիտական ուսումնասիրություններ:

Ջավեն Արզումանյան, որ կարճ ուսումնասիրություններ գրած է հայ դասական գրողներու մասին, ընդհանուր հետաքրքրություններ ունեցող ընթերցողին համար, հրատարակած է Ղևոնդ վարդապետի «Պատմություն»-ը իբրև The History of Lewond: The Eminent Vardapet of the Armenians (Philadelphia, 1982): Թարգմանությունը հիմնված է քանի մը խմբագրություններու վրա, որոնց շարքին Մաշտոցի անվան Մատենադարանի XIII դարու օրինակը՝ «Ձեռագիր 1902», Կարապետ Շահնազարյանի 1857-ին Փարիզի մեջ հրատարակած խմբագրությունը, ինչպես նաև Կարապետ Եղյանի 1883-ի Ս. Պետրոսի խմբագրությունը: Արզումանյան կուսումնասիրեն Ղևոնդի և իր նախորդին՝ Սեբեոսի, ինչպես նաև զինք հաջորդող միջնադարյան պատմաբաններու գործերուն միջև գոյություն ունեցող կապերը: Ան կեզրակացնեն, թե արաբական արշավանքներու և Հայաստանի տիրապետության հարազատ և

վստահելի պատմաբանն է և թե կցուցաբերե աշխարհագրության և զինվորական պայմաններու, արաբական վարչական և հարկային քաղաքականության ճշգրիտ և մանրամասն ծանոթություն: Ղևոնդի ներկայացուցած արաբ կառավարիչներու ցանկը կուռ և ամբողջական է. ան նաև արձանագրած է VIII դարու արաբական տիրապետության դեմ ուղղված այն հայկական ապստամբությունները, որոնց արդյունքը եղավ Մամիկոնյան և Կամսարական տուններու բնաջնջումը և իրենց պապենական հողերու գրավումը: Արգումանյան վերջերս հրատարակեց Ուխթանես Եպիսկոպոս Սեբաստացիի պատմության երկրորդ մասը, որ կվերաբերի վրաց եկեղեցիի հայկական եկեղեցիին բաժանման: Գործի անգլերեն թարգմանությունը խորագրված է Bishop Ukhtanes of Sebastia, History of Armenia (Fort Lauderdale, Florida, 1985):

Ավտոյանի ավարտաճառը՝ նվիրված Հովհան Մամիկոնյանի «Պատմություն Տարոնյա»-ի History of Taron (Columbia University, 1985: UMI Order No. DA 8604594), հիմնված է Երևանի, Լենինկրատի և Փարիզի ձեռագրերուն և խմբագրություններուն վրա: Աշխատությունը կբովանդակե ներածական մը, ուր Ավտոյան կմեկնաբանե տեղանուններ և անձնանուններ, արտաքին թե ներքին հակասություններ, այլ հեղինակներ և փոխառություններ, ինչպես նաև այդ ժամանակաշրջանի Տարոնի պատմության, քաղաքական և կրոնական մթնոլորտին մասին տեղեկություններ: Ավտոյան կվերաբնեզործի վավերականության վերաբերող բանավեճը: Նոր փաստերու լույսին տակ, ան կեզրակացնե, այլ մասնագետներու նման, թե Պատմությունը խիստ միտումնավոր է, գրված Գլակի վանքը օրինականացնելու նպատակով, զայն գերադասելու համար էջմիածնի և Դվինի աթոռներին և վերջապես շահելու համար ժամանակի աղնը վականության հովանավորությունը: Ավելին, թարգմանը ցույց կուտա, թե գործը կազմված է երկու բաժիններե, որոնցմե առաջինը գրված է նույն անձի կողմից 966 և 988-ի միջև, մինչ երկրորդը՝ որ կպարունակե վերջին երկու հարադեպերը, հիշատակարանը և հավանաբար ամբողջ գործի մեկ խմբագրությունը, ուրիշի մը կողմից, 1220-են առաջ:

1985—86-ին, Միացյալ Նահանգներու մեջ հրատարակված թարգմանություններու թիվը զգալիորեն բարձրացավ Ռոբերտ Պետրոսյանի հրատարակած մեջ հաջորդական հատորներու հավելումով, որոնք բոլորն ալ լույս տեսան „Sources of the Armenian Tradition“ շարքին մեջ (New York): Ան իր ավարտաճառը ամբողջացուց Քուլումբիա համալսարանին ներս 1979-ին. անոր մասնագիտությունն է մոնկոլական արշավանքները և XIII—XIV դարերու Հայաստանի նախարարական տունները: Իր թարգմանությունները, որոնք կամ ամբողջացած են և կամ արդեն իսկ սկսված մինչ ինք կամբողջացնե իր ավարտաճառը, ներկայիս տրամադրելի են մեքենագրված և պատճենահանված ձևի տակ: Պետրոսյան կմտաբերե, թե նախապես իր հայերեն կարդալու անկարողությունը պատճառ կհանդիսանար իր հայկական սկզբնաղբյուրներու փնտրատուքին հուսախաբություն վերջանալուն: Ան կըսե, թե զինք կուրախացնե այն մտածումը, թե այսօր, երբ հայ երիտասարդներ նույն փնտրատուքին ձեռնարկեն, պիտի կարենան օգտվիլ իրենց այս հարուստ ժառանգեն:

Ցարդ, Պետրոսյան թարգմանած և մեքենագրված ձևի մեջ տրամաբերիլը րած է Փավստոս Բուղանդի, Ղազար Փարպեցիի, Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի, Արիստակես Լաստիվերտցիի և Կիրակոս Գանձակեցիի գործերը: Յուրաքանչյուրը ունի հակիրճ ներածական մը, որ ձեռագրի հեղինակության, թվականի և բովանդակության հարցերուն կվերաբերի: Հակառակ այն իրողության, որ իր թարգմանությունները ավելի բառացի են քան դրական մշակումով, Պետրոսյան անոնք հիմնած է արդեն իսկ հրատարակված քննական խմբագրությանը վրա և հայկական սկզբնաղբյուրի էջագրումը կհիշատակե իր անգլերեն թարգմանության լուսանցքին մեջ, դյուրացնելու համար սկզբնաղբյուրին վերադառնալու հարցը: Պետրոսյանի թարգմանությունները ընդհանրապես ուղղված են ամբերկահայերու, որոնք հետաքրքրված են իրենց արմատները վերապնդելով,

ինչպես նաև՝ պատմության մասնագետին, որ կուզե ծանոթանալ հայկական պատմության սկզբնաղբյուրներուն և ավանդություններուն:

Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց»-ի (History of the Armenians) թարգմանությունը հիմնված է Քերովքե Պատկանյանի Վենետիկի ձեռագրի 1889-ի քննական խմբագրության 1933-ի վերահրատարակության վրա: Քննելով Փավստոսի ինքնության, գրության վայրի և գործածած սկզբնական լեզվի վերաբերող հարցերը, Պետրոսյան կեղծակցնե, թե հեղինակը V դարուն կպատկանի: Այս եզրակացությունը հիմնված է այն իրողության վրա, որ Փավստոս միայն վտիտ կերպով կհիշատակե IV դարու բյուզանդացի կայսրերը, մինչ Մամիկոնյանները կներկայացնեն իբրև Հայաստանյայց եկեղեցվո և նախարարական դասի օրինական պաշտպաններ:

Ղազար Փարպեցիի «Պատմութիւն Հայոց»-ի (History of the Armenians) թարգմանությունը հիմնված է Կ. Տեր-Մկրտչյանի և Ստեփան Մալխասյանի Թիֆլիսի մեջ, 1904-ին հրատարակած քննական խմբագրության վրա: Այս թարգմանությունը, սակայն, չի պարունակեր «Թուղթ առ Վահան Մամիկոնեան»-ը, Ըստ Պետրոսյանի, Ղազար Փարպեցին ոչ միայն V դարու Հայաստանի ռազմական, քաղաքական և կրոնական պատմության գլխավոր աղբյուրներն է, այլ նաև հիմնական աղբյուր է Պարսկաստանի պատմության համար և այդ՝ հակառակ Սասանյաններու և անոնց կառավարիչներու քաղաքականության հանդեպ իր տածած բացահայտ ատելության: Փարպեցիի համար Մամիկոնյանները ևս սուրբ պատերազմիկներ էին, հավատքի պաշտպաններ, աղքատի պահպաններ և համահավասարները Իրանի գերագույն ազնվականության:

Սեբեոսի «Պատմութիւն ի Հերաքլես» (History of Heracles) թարգմանությունը, Sebeos's History անվան տակ, կատարված է Պատկանյանի Ս. Պետրբուրգի 1879-ի խմբագրություննե, որոշ ականակություններով Գ. Վ. Աբգարյանի 1979-ի խմբագրության վրա: Գալով Սեբեոսին, Պետրոսյան կեղծակցնե ըսելով, որ հեղինակը հայրենասեր պատմաբան մըն է, ոչ մեկ նախարարական տան շեշտակի պաշտպանը և ջերմ ջատագով մը Հայաստանյայց եկեղեցվո անկախության:

Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարոնոյ»-ի թարգմանությունը (History of Taron) հիմնված է 1889-ին վերահրատարակված Վենետիկի 1823-ի խմբագրության վրա: Մինչ Մամիկոնյանի կհավանի ներկայացնել հայրու պայքարը ընդդեմ զրադաշտական Պարսկաստանի Պետրոսյան կհավատա, թե անոր նկարագրությունը իրականության մեջ կվերաբերի արաբական և նույնիսկ սելճուք արշավանքներուն: Ամեն պարագայի, հետաքրքրական պիտի ըլլար գործը բաղդատել բյուզանդական, պարսկական, թրքական և այլ հայկական ժամանակակից գյուցաղներգություններուն հետ:

Պետրոսյանի Արիստակես Ղաստիվերտցիի «Պատմութիւն»-ի թարգմանությունը հիմնված է Կարեն Յուզպաշյանի 1963-ի Երևանի հրատարակության քննական խմբագրության վրա: Անոր կցված է Հակոբ Անասյանի կողմէ պատրաստված ամբողջական մատենագիտություն մը: Ղաստիվերտցին կմատնանը շվի իբրև հայ-բյուզանդական հարաբերություններու, Սելճուք արշավանքներու և Թոնդրակյան շարժման գլխավոր սղբյուրներն մեկը: «Հակառակ նախկին հայ պատմաբաններու ավանգության, Արիստակես հովանավորող մը շուրջ և Հայոց պատմության ընթացքին հատուկ ազնվական տան մը ունեցած դերին գովաբանությունը չէ որ կընեն: Անդհակառակը, ան հայրենասեր պատմաբան մըն է, որ կը դատապարտե և կծաղկե այն կեղծակցներուն և իշխաններուն, որոնք վնասակար գործունեություն ունեցած են հայ ազգային եկեղեցվո և պետականության դեմ»:

Վերջապես, Պետրոսյանի Կիրակոս Գանձակեցիի «Պատմութիւն Հայոց»-ի (History of the Armenians) թարգմանությունը հիմնված է Կ. Ս. Մելիք-Յանջանյանի 1961-ին Երևանի մեջ լույս տեսած խմբագրության վրա: Այս վերջինը, իր կարգին, հիմնված էր Մաշտոցի անվան Մատենադարանի 30 ձե-

ազդերուն վրա: Թարգմանութենեն զանց առնված են կարգ մը տեսական և աստվածաբանական հարցերու վերաբերող բաժիններ: Հստ նյութի բաժնելու՝ գործի զանազան հատվածները, Պետրոսյան կուրվագծե Կիրակոսի կյանքը, հաստատելով, թե «ան մեծապես կարող էր» գրել XIII դարու Հայաստանի պատմության մասին, ի նկատի ունենալով անոր պատրաստությունը, գիրքը, ծանոթությունները և մոնղոլներու կողմից իր արգելափակումը: «Նման անձնավորություն մը ոչ միայն լավատեղյակ էր իր շրջապատին, այլ նաև խորապես կհասկնար Հայաստանի նոր տերերու կենցաղային բնորոշ հատկանիշները»: Պետրոսյան այժմ կաշխատի Թովմա Մեծոբեցիի «Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ Յաջորդաց Իւրոց» (History of Tamerlane and His Successors) թարգմանության վրա: Հոս պետք է հիշվի, թե փրոֆ. Նինա Ի. Գարսոյան, որ Վերահսկած է հայկական հին և միջնադարյան աղբյուրներուն վերաբերող զանազան ավարտաճառեր և կարևոր թարգմանական աշխատանք տարած է ռուսերենն անգլերենի վերածելով, լայն ծանոթագրություններ ավելցնելով Հակոբ Մանանտյանի, Նիկոլայ Ադոնցի և Արամ Տեր-Ղևոնդյանի գործերը, այժմ իր ուշադրությունը կեդրոնացրած է Փավստոս Բուզանդի պատմության մեկ քննական խմբագրության վրա: Գարսոյան հայտնի է ժամանակաշրջանի հայկական աղբյուրները շրջակա երկիրներու ընդհանուր պատմության պարունակի մը մեջ տեղավորելու իր մոտեցումով, ինչպես նաև հայ քրիստոնյա պատմիչներու Հայաստանի և Պարսկաստանի պատմական, մշակութային և ընկերային հասարակաց ժառանգությունը բացատրելու իր աշխատանքով:

Փրոֆ. Ռոբերտ Թոմսոնի հայկական դասական աղբյուրներու անգլերեն թարգմանությունները առանձին դաս մը կկազմեն: Թոմսոն, որ դասախոս է Հարվերդ համալսարանի մեջ և միևնույն ժամանակ տնօրենն է Դըմբարթոն Օքս (Dumbarton Oaks) բյուզանդագիտության կեդրոնի (Washington, D. C.), իր թարգմանություններուն ընդարձակ ներածականները, ծանոթագրությունները և մեկնաբանությունները կճոխացնեն դասական լեզուներու, աստվածագիտության, բաղդատական գրականության, հունա-լատինական և հին քրիստոնեական սկզբնաղբյուրներու իր գիտությամբ: Թոմսոն հայ հեղինակներով հետաքրքրված է ոչ միայն որպես պատմաբաններ, այլ ավելին՝ իբրև գրական դեմքեր: Այսպես՝ ան կպնդե անոնց աղբյուրներն ու նախատիպերը, նաև անոնց դրդապատճառները, գրելու նպատակները: Ան հրատարակած է չորս կարևոր ուսումնասիրություններ, որոնք կընդգրկեն Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացիի, Նզիշի և Թովմա Արծրունիի գործերուն թարգմանությունները՝ օժտված ընդարձակ ներածականներով, ծանոթագրություններով և զանազան հավելվածներով:

Հայ հեղինակներու որպես պատմաբաններ դատումին, ինչպես նաև անոնց աղբյուրներու պարզաբանումին մեջ, Թոմսոն ըրած է կարգ մը հաստատումներ, որոնք վշտացուցած են զանազան պաշտոնակիցներ և արժանացած անոնց խիստ քննադատությանց: Ան կգրե, օրինակի համար, թե հակառակ որ Խորենացի կհավակներ գրել անկողմնակալ ձևով, աղբյուրներու ուշադիր արժեւորումով՝ պատմական ճշմարտությունը վեր հանելու նպատակով, իրականության մեջ դիտումնավոր կերպով կխեղաթյուրեր իր աղբյուրները և կհնարեր զանազան դրվաքներ: Թոմսոն Խորենացիին հատկանշելու համար որգեղրած ոճին, և ածականներու ընտրությանը մեջ ծայրահեղ գտնված է: Ավելին, ան Խորենացին և Նզիշեն կը տեղավորեր V դարեն դուրս: Զայրացած և վրդոված այս երեւոյթեն և զայն նկատելով շարամիտ քննադատություն մը, սկզբնաղբյուրներու ընթերցանության լուրջ սխալ հասկացողություն մը և ավելին՝ սխալ մեկնաբանություն մը, բազմաթիվ հայ մտավորականներ քննադատած են Թոմսոնը՝

* Մովսես Խորենացու Պատմությանը տված Թոմսոնի մի շարք դնահատականներ, բնութագրումներ, ինչպես և պատմիչի ժամանակի վերաբերյալ նրա կարծիքը իսկապես անհիմն են և անընդունելի (խմբ.):

Իս անձնապես այս նյութին մասնագետը չեմ, բայց ինծի կթվի, թե մինչ կարելի է հարցադրել Թոմասոնի կարգ մը փաստարկություններն ու եզրակացությունները, ան իրականության մեջ շատ ավելի կգնահատե հայ դասական հեղինակները քան ոմանք կենթադրեն։ Իր թարգմանություններու ներածականներուն մեջ ան հստակորեն հաստատած է, որ այդ հեղինակները կնկատե հիմնական գրական դեմքեր՝ օժտված առաքելության մը գիտակցությամբ և որոնց նպատակները տակավին կիրարկելի և շահեկան կմնան հայերուն համար այսօր։ Ավելին, ան ցույց տված է, թե այս սկզբնաղբյուրները արժեքավոր տեղեկություն կփոխանցեն ոչ միայն հայոց քաղաքական և ընկերային պատմության, գրականության, աստվածաբանության և արվեստի պատմության՝ այլ նաև դրացի ժողովուրդներու պատմության և մշակույթի մասին։ Անոնք հատուկ տեղ կզբաղեն հայ պատմագրության մեջ իբրև ստացված ավանդության սրբաբաններ։ Թոմասոն կգրե նաև, թե անոնք մեծած գործեր չեն, այլ կապրին՝ հըստակ պատգամով մը ներկային համար՝ «Հայաստան» փոքր երկիր մը, որ սակայն խոր հնություն ունի, ուր շատ մը հերոսություններ գործված են (Մովսես), ազգ մը, որ քրիստոնեությունը ընդունած է ուրիշ շատ մը ժողովուրդներե առաջ և ուր աստուծոյ շնորհքը հայտնված է (Ագաթանգեղոս)։ Ժողովուրդ մը, որ հավատարիմ իր հավատքին, ճշմարիտ իր պապենական ավանդություններուն և պատրաստ մարտիրոսության անգամ երբ ավելի ուժեղ կայսրություններ փորձեն ընկճել հայերու ազատությունները (Նդիշե)։ Հակառակ այս բոլորին սակայն, և տրված ըլլալով որ Թոմասոն այս գործերը կնկատե գլխավորաբար գրական երկեր՝ հատուկ պատգամով մը օժտված, պատմագրություններուն վստահելի աղբյուրներ կամ վավերական վկայություններ ըլլալու հանգամանքին կնվազի։

Ագաթանգեղոսի «Պատմություն հայոց»-ի իր թարգմանությունը, Agathangelos, History of the Armenians (Albany, New York: State University Press, 1976) կըրովանդակե ընդարձակ ներածական մը, ուր կարծարծվի գործի առեղծվածային բնույթը. ան կհաստատե, թե Ագաթանգեղոսի գործը պատմագրություն մը ըլլալն ավելի վարքագրություն մըն է, որ կմիտեն Գրիգոր Լուսավորիչը վսեմացնելու։ «Գրիգոր պետք էր ներկայացվեր իբրև քաղաքական թե կրոնական կյանքի ներս դերակատար եղած կրոնապետներու նախատիպաբար»։ Թոմասոն կհավատա, որ ինչ ալ ըլլար Ագաթանգեղոսի իսկական ինքնությունը, անոր սկզբնական գործը գրված էր հայերեն լեզվով և ուրեմն կտեղավորվի V դարուն մեջ, Կորյունեն ետք։ Թարգմանը կմատնանշե նաև, թե Ագաթանգեղոսի իր նկարագրած դեպքերուն վկայած ըլլալու հավանությունը անմիջապես կապված է գործի վարքագրություն մը ըլլալու բնույթին հետ։ Ան նաև ցույց կուտա, թե «Հայոց Պատմության» հեղինակը իր պատումի ոճին և պատկերներու համար օգտված է Աստվածաշունչեն. ավելին, Թոմասոնը կպնդե, որ Ագաթանգեղոսի և այլ հայ հեղինակներու միջև գոյություն ունեցող հաճախ բառացի նմանությունները չեն կրնա զուտ դիպվածի հետևանք ըլլալ և կամ վերագրվիլ գրական արտահայտության նմանօրինակ դաստիարակության մը։ Նվ վերջապես, Թոմասոն կեզրակացնե, թե Ագաթանգեղոսի պատմագրության գլխավոր դրդապատճառն էր արդարացնել և զօրացնել կրոնապետներու հեղինակությունը բյուզանդական և սասանյան սահմաններեն ներս ապրող բոլոր հայերուն վրա։ Թարգմանութենեն դուրս մնացած է Գրիգոր Լուսավորիչի քարոզներուն և ուսմունքին հատկացված ամբողջ բաժինը, տրված ըլլալով, որ Թոմասոնը նախապես թարգմանած էր այդ բաժինը և հրատարակած իր անկախ ներածականով և ծանոթագրություններով իբրև The Teaching of Saint Gregory: An Early Armenian Catechism (Cambridge: Harvard University Press, 1970):

Մովսես Խորենացիի «Պատմություն հայոց»-ի թարգմանությունը Թոմասոնի կողմից History of the Armenians (Cambridge: Harvard University Press, 1978) քննական խմբագրություն մըն է, ընդարձակ ծանոթագրություն-

ներով և հունական, սիրեաք, Աստվածաշունչի և այլ հին քրիստոնեական աղբյուրներու հետ բաղդատություններով հարուստ: Իր վաթսուն էջոց ներածականը կկեղրոնանա հորենացիի տեղագրումը, աղբյուրները և հմտությունը շրջապատող բանավեճերուն վրա:

Թոմասն կներկայացնե նաև հորենացիի գրական պատրաստությունը. աղբյուրներն ու գրելաձևը: Այս հատվածին մեջ է, որ թարգմանը հորենացին կպատկերացնե իբրև խելացի, լավատեղյակ և ստեղծագործող հեղինակ մը, որուն նպատակները կգերազանցեն դեպքերու պարզ արձանագրությունը և հերոսական դեմքերու հիշատակությունը: Արդարև, Թոմասնը կհաստատե. թե հորենացին մեծ ազատությամբ կօգտագործե իր ձեռքի տակ ունեցած աղբյուրները և հակառակ այն իրողության, որ ան կհավակնի ըսել, թե ինք կարդացած է այլազան դասական աղբյուրներու բնագրերը, իրականության մեջ, չափայն, այդ բնագրերու հայերեն թարգմանություններուն ծանոթ է միայն: Անոր նպատակը «Հայաստանը աշխարհի պատմության հունին միացնել»-ն է և ասոր համար ան գրական բազմաթիվ աղբյուրներ օգտագործած է:

Թոմասն կհավատա, որ հորենացին սկսած է գրել այն ժամանակաշրջանին, երբ Բագրատունիները սկսած էին գերադասել Մամիկոնյաններուն, ալ-սինքն VIII դարուն, Աբասիդ շրջանին: Ան չէր գրեր պարզապես ժամանակի քաղաքական կարիքներուն գոհացում տալու համար: Իր գործը «փորձ մըն է հայկական ավանդությունը համագրելու, և հակառակ կողմնակալ դիրքորոշումին, զայն կուռ կերպով ներկայացնելու և հայության տրամադրության տակ դնելու պատմություն մը, որ նույնքան հարգանքի արժանի է, որքան ալ ժողովուրդներունը»: Անոնց համար, որոնք կհավատան, թե հայոց պատմությունը միշտ ալ հարգելի եղած է, այս եզրակացությունը կրնա հավակնոտ թվիլ: Տրված ըլլալով, որ Թոմասնի շեշտը Սուրբ Գրքային գրական բաղդատական քրնարկման վրա կկեղրոնանա, ոմանք կրնան եզրակացնել, թե Թոմասնը նկատի չէ ունեցած այն իրողությունը, որ հորենացի կներկայացնե հայ քաղաքական և ընկերային կառույցները:

Թոմասն նաև թարգմանած է Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» History of Vardan and the Armenian War (Cambridge: Harvard University Press, 1982): Ներածականին, ծանոթագրություններուն և Աստվածաշունչի մեջքերումներու հավելվածի կողքին, Թոմասն իր թարգմանության մեջ կներառնե Ղազար Փարպեցիի պատմության հատկանշական մեկ հատվածը, որ անմիջապես կառնչվի Վարդանանցին: Ներածականը կքննե Եղիշեի աղբյուրները, հատկապես «Գիրք Մակաբայեցոց»-ի անոր վրա ունեցած ազդեցությունը, գործի ղխավոր նյութն ու նկարագիրը, Եղիշեի և Փարպեցիի պատմաներու տարբերությունը և անոնց պատճառները, հեղինակի թվականները և վերջապես հայ գրականության վրա Եղիշեի ունեցած ազդեցությունը: Եղիշեի թեման կրոնքեն անդին կանցնի ու ղխավորապես կկեղրոնանա հայ ժողովուրդի ավանգույններուն և ապրելակերպի պահպանումին վրա: Հայերը միմյանի են իրենց գոյամարտին մեջ, որ սակայն համաքրիստոնեական պայքարի ընդմիջումն է: «Ծակատամարտը դեպք մը չէ, որ կսահմանափակվի 450—51 թվականներով, այլ դարավոր պայքար մը՝ հայկական ավանգույնաց պահպանման ի խնդիր»: Ուրեմն պատմությունը կշարունակե ներշնչել նոր սերունդները, տրված ըլլալով, որ հայ ժողովուրդի դիմակալած հարցերը փոխված չեն: Թոմասնը կհավատա, որ ինչպես նախապես գրած էր Ագաթանգեղոսի և հորենացիի պարագային, Եղիշեն իր կարգին կղրաղի «դեպքերու գիտակից և հմուտ վերլուծումով»: Այս երեք հեղինակներու գործերը հիմնական արժեք կներկայացնեն հայ ժողովուրդի ինքնագիտակցության համար:

Թոմասնի վերջին թարգմանական աշխատանքն է Թովմա Արծրունիի «Պատմութիւն Տանն Արծրունեաց»-ը, History of the House of the Artshunik (Detroit: Wayne State University Press, 1985): Այս ուսումնասիրության մեջ Թոմասն ցույց կուտա, որ Թովմա Արծրունիի հստակո-

րեն ազդված է ու հետևարար պարական՝ Եզիշեի և Մովսես Խորենացիի, հատկապես ինչ կվերաբերի իր գործածած պատկերներուն և պատմագրութիւն հանգեալ որդեգրած կեցվածքներուն: IX դարու երկրորդ կեսի ընթացքին Պուղարի և Բաղդաթի իսլամ խալիֆներու գեմ հալերու մոտո պալաքալի իր նկարագրութիւնը, հստակորեն գրագաշտ պարսիկներու դեմ Եզիշեի բնութագրած պալաքալը, ինչպես նաև նսան ճգնաժամային օրերուն հայութիւն ցուցարեւած խիղախութիւնը կվերհիջեցնեն: Թոմսոն կհաստատան, որ Արծրունիի գործը ու սիւն պարգ արձանագրութիւնը սրն է արաբներու հարավային Հայաստան ներխուժումի պատմութիւն, այլ նաև հիմնական աղբյուր է արվեստի պատմութիւն, ինչպես նաև՝ նախարարական սիւն սեկ տոհմի վրա կեզրոնացող առաջին գործը: Ան իր կազմին մեջ կներառնեն Վասպուրականի տեղական առաքելներն ու ավանդութիւններն և կնկարագրեն աղնվականութիւն առօրյան ու ապրելակերպը «պատերազմի դաշտի քաջագործութիւններուն կհեակին խնճուղներն ու որսորդութիւնը»: Թոմսոն կեզրակացնեն, որ Թովմա Արծրունի իր գործը ավարտած էր 908-են առաջ, այսինքն՝ նախքան Գագիկ Արծրունիի թագագրումը, և թե գրութիւն հիմնական նպատակներն մին՝ Արծրունիները պատշաճ և փառավոր նախահայրերով օժտելն էր: Մինչև այն ատեն, որ Թովմա Արծրունի կառչած կմնար պատմագրութիւն այն տեսլականին, ըսա որուն, պատմութիւնը կոչված է իր անցյալի շքեղ իրագործումներու շողերը տարածելու ներկա սերունդներուն վրա, ան Մովսես Խորենացիի արժանավայել ժառանգորդն էր: Փրոֆեսոր Թոմսոնի հաշորդ թարգմանութիւնը Վարզան Արևելցիի «Ժամանակագրութիւն»-ն (Chronicle) է, որ պիտի հրատարակվի աղբյուրներու հատուկ մեկնարանութիւնը:

Հայկական պատմագրական գործերու անգլերենով կատարված թարգմանական տշխատանքներու մտսին այս ակնարկն ի հայտ կուգա, որ հիմնական հառաջգիմութիւն մը իրագործված է վերջին երկու տասնամյակներու ընթացքին: Արդարև, անգլերեն լեզվի միջոցով ընթերցողներ, առաջին անգամ ըլլալով, կրնան ծանոթանալ հայ հին և միջնադարյան հեղինակներուն և թարգմանութիւններուն գուգահեռ տրված ներածականներուն, մեկնարանութիւններուն և թարգմանիչներու ծանոթագրութիւններուն ընդմեջն հայտնարերելու հայ պատմական և գրական ավանդութիւններուն հարստութիւնն ու բարգութիւնը:

ПЕРЕВОД АРМЯНСКИХ КЛАССИЧЕСКИХ ИСТОЧНИКОВ В СОЕДИНЕННЫХ ШТАТАХ

Проф. РИЧАРД ОВАННЕСЯН
(США, Калифорнийский университет)

Резюме

В статье дается информация об английских переводах произведений древних армянских историков-классиков. Доклад был прочитан на первом Международном симпозиуме по средневековой армянской литературе в сентябре 1986 г.